ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 16/06
«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
ԽՈՐՀՐԴԻ արտահերթ նիստի

ք. Երևան *02-ը սեպտեմբերի 2016թ.*

2016 թվականի սեպտեմբերի 2-ին տեղի ունեցավ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության Խորհրդի արտահերթ նիստը՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ՝ առցանց:
Նիստին հեռակա կարգով մասնակցում էին խորհրդի բոլոր հինգ անդամները՝

1. Հայկակ Արշամյան
2. Սուրեն Սաղաթելյան
3. Վազգեն Կարապետյան
4. Միքայել Հովհաննիսյան
5. Նվարդ Մանասյան

Նիստին առցանց մասնակցում էին նաև ԹԻՀԿ գործադիր տնօրեն Վարուժան Հոկտանյանը, փոխտնօրեն Սոնա Այվազյանը: Առցանց թղթակցությունը վարում էր ԹԻՀԿ անդամ Հերիքնազ Տիգրանյանը:

Օրակարգում՝

1. ԹԻՀԿ գործադիր տնօրեն Վարուժան Հոկտանյանի լիազորությունների դադարեցման մասին որոշման ընդունում,
2. ԹԻՀԿ նոր գործադիր տնօրենի ընտրություն,
3. Նորընտիր գործադիր տնօրենին լիազորում, որպես ԹԻՀԿ պաշտոնական ներկայացուցիչ ԹԻ ընդհանուր ժողվում:

Օրակարգի 1-ին հարց	Խորհրդի նախորդ նիստում արդեն տեղեկացվել էր, որ ծրագրային ծանրաբեռնվածության պատճառով ԹԻՀԿ գործադիր տնօրեն Վարուժան Հոկտանյանը հրաժարվում է հետագա պաշտոնավարումից, ուստի դիմել է Խորհրդին իր լիազորությունները դադարեցնելու համար: Հիմք Վ.Հոկտանյանի՝ 31.08.2016թ. էլեկտրոնային դիմումը՝ կցվում է:
Խորհուրդը	***Որոշեց՝ Հիմքը ընդունելով Վ. Հոկտանյանի դիմումը և ղեկավարվելով ԹԻՀԿ կանոնադրության 3.7.9.կետի «զ» ենթակետով՝ դադարեցնել գործադիր տնօրենի լիազորությունները:*** *Քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 5 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:*
Օրակարգի 2-րդ հարց	Խորհրդի անդամների կողմից գործադիր տնօրենի պաշտոնում առաջադրվեց Սոնա Այվազյանը, այլ թեկնածություններ չեղան: Անցկացվեց քվեարկություն և ընտրությունը կայացավ:
Խորհուրդը	***Որոշեց՝ ԹԻՀԿ գործադիր տնօրենի պաշտոնում ընտրել Սոնա Այվազյանին:*** *Քվեարկության արդյունքները՝ կողմ՝ 5 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:*
Օրակարգի 3-րդ հարց	ԹԻ ընդհանուր ժողվում ԹԻՀԿ-ն պաշտոնապես ներկայացնելու համար նորընտիր գործադիր տնօրենը պետք է լիազորվի Խորհրդի կողմից:
Խորհուրդը	***Որոշեց՝ ԹԻՀԿ գործադիր տնօրեն Սոնա Այվազյանին լիազորել ներկայացնելու ԹԻՀԿ-ն, որպես պաշտոնական ներկայացուցիչ, ԹԻ ընդհանուր ժողվում:***
Խորհուրդը	Շնորհավորեց Սոնա Այվազյանին ընտրվելու կապակցությամբ և շնորհակալություն հայտնեց Վարուժան Հոկտանյանին՝ կատարած աշխատանքների համար:

Խորհրդի նախագահ՝ _____ Հ. Արշամյան

Նիստի քարտուղար՝ _____ Հ. Տիգրանյան